ԱՐՑԱԽԻ ԽՆԴԻՐԸ ՎՐԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ (ԸՍՏ 1999-2009 ԹԹ. ՎՐԱՑԱԼԵԶՈՒ ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ) մաս II

Վահե Դավիթի Սարգսյան
ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտաշխատող,
պատմության գիտությունների թեկնածու

Այսպես, կրկին վերլուծելով Վրաստանի հարավում երկու «պոտենցիալ անջատողական օջախներում»՝ Սամցխե-Ջավախքում և Քվեմո Քարթլիում առկա իրադրությունը, վերլուծաբան Գիորգի Ուձիլաուրին փաստում է, որ Ախալքալաքից ռուսական ռազմաբազաների դուրս բերումը կարող է տհաճ իրադրություն առաջացնել վրաց-ադրբեջանական հարաբերություններում: Փորձագետին անհանգստացնում է այն, որ ռուսները կարող են ռազմաբազան տեղափոխել Հայաստան, նվիրեն հայերին, իսկ վերջիններս էլ այն կտեղափոխեն Ղարաբաղ և օգտագործեն Ադրբեջանի դեմ: Գ. Ուձիլաուրին այստեղ շտապում է հիշեցնել նաև, որ «Ղարաբաղը պաշտոնապես Ադրբեջանի տարածքն է»[1]: Փորձագետը կողմնակից է Վրաստանի բալանսավորված քաղաքականությանը, չնայած, որ, արտահայտած մտքերում գերակշռում են ադրբեջանամետ տրամադրությունները: Այսպես, օրինակ, ըստ Գ. Ուձիլաուրիի՝ պատմության ընթացքում վրացիները ադրբեջանցիների հետ երբեք չեն պատերազմել (հարգարժան վերլուծաբանը երևի մոռանում է, որ Ադրբեջանի պատմությունն սկսվել է 1918 թվականից), բացի այդ, երկու հանրապետություններին էլ միավորում է նույն հիմնախնդիրը՝ խախտված տարածքային ամբողջականությունը, ավելին՝ երկու երկրների էթնոբախումներում էլ հայերը պայքարել են ընդդեմ այդ պետությունների (հեղինակը այստեղ արցախահայության հետ մեկտեղ ի նկատի ունի նաև սեփական գոյության և արժանապատիվ կյանքի համար աբխազների հետ կողք-կողքի պայքար տարած աբխազահայերին): Գ. Ուձիլաուրին եզրակացնում է, որ վրացիները բոլորից շատ ադրբեջանցիներին են համակրում, և դա իրենք՝ հայերն էլ են զգում[2]:

2005թ. հոկտեմբերին ՀՀ-Ադրբեջան հարաբերություններին և արցախյան հիմնահարցին նվիրված ծավալուն անդրադարձով է հանդես եկել «Ախալի ազրի» թերթը[3]: Փաստենք, որ հրապարակման մեջ տեղ են գտել և՛ ՀՀ, և՛ ԱՀ պաշտոնական տեսակետները Արցախի հիմնահարցի կարգավորման մասին: Հրապարակումը հարուստ է երկկողմ հնչեցված տեսակետների մեջբերման մասով: Թերթը, կարելի է ասել, տուրք չի տվել այս կամ այն կողմի

---

[1] **«ახალი თაობა»** («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 152, 2005.

[2] Տես նույն տեղում:

[3] **«ახალი აზრი»** («Ախալի ազոի» («Նոր միտք»)), N 41, 2005.

տեսակետներին և խնդիրը ներկայացրել է չեզոք դիրքերից՝ միաժամանակ մտահոգություն հայտնելով արցախյան հակամարտության շուրջ իրադրության սրման և պատերազմի հնարավոր վերսկսման կապակցությամբ: Հրապարակման մեջ ներկայացված են նաև Արցախի ժողովրդագրությանն առնչվող որոշ պաշտոնական վիճակագրական տվյալներ: Հավելենք նաև, թերթի հրապարակումը դժգոհության որոշակի երանգավորում է ստանում այն մասում, որտեղ ներկայացվում է ԼՂՀ պատգամավորների այցը Ցխիվալ՝ մասնակցելու Հարավային Օսիայի անկախության 10-րդ տարեդարձին նվիրված տոնակատարություններին: Հետաքրքրական է, որ այս և վրաց հեղինակների բազմաթիվ այլ հրապարակումներում ԼՂՀ-ի մասին խոսելիս գրեթե չի օգտագործված «այսպես կոչված» եզրույթը: Դրան գործնականում առաջին անգամ հանդիպեցինք սույն հրապարակման մեջ. այն օգտագործված էր ԼՂՀ ՊԲ մամուլի խոսնակ Սենոր Հասրաթյանի պաշտոնը նշելու ժամանակ: Թերթում ներկայացված Ադրբեջանի քարտեզում, որպես ադրբեջանական տարածք, ներառված է նաև ԼՂՀ-ն:

2006թ. վրաց-ռուսական թեժացող հարաբերությունները և Վրաստանի քաղաքական կողմնորոշման խնդիրներն է շոշափում իր ծավալուն հարցազրույցում ընդդիմադիր գործիչ Ակակի Ասաթիանին: Քննադատելով Մ. Սահակաշվիլու ապակառուցողական քայլերը և վերլուծելով Ռուսաստանի, ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ազդեցությունները տարածաշրջանի վրա՝ Ա. Ասաթիանին անդրադառնում է նաև Վրաստան-Ադրբեջան հարաբերություններին և ափսոսանքով հիշատակում Շևարդնաձե-Ալիև ժամանակաշրջանում ձևավորված ալյանսը, մի համագործակցություն, որը, ըստ քաղաքական գործչի, կարող էր ունենալ համաշխարհային նշանակություն, կապել իրար արևելքն ու արևմուտքը, էներգոհամակարգերը, փակել հյուսիսը հարավին միացնող ճանապարհը և այլն: Ա. Ասաթիանին ուղղակի չի խոսում Ղարաբաղի մասին, բայց փաստում է, որ և' Վրաստանը, և' Ադրբեջանն ունեն միատեսակ տարածքային խնդիրներ[1]: Նույն թերթի մեկ այլ համարում տված ծավալուն հարցազրույցում Հայաստան-Ադրբեջան հարաբերություններին և ղարաբաղյան ճակատում ռազմական գործողությունների հնարավոր վերսկսման դեպքում Վրաստանի կողմնորոշման խնդրին է անդրադարձել քաղաքագետ Ռամազ Կլիմիաշվիլին: Ընգծված ադրբեջանամետ գործիչը հանդես է գալիս յուրօրինակ դատողություններով: Ըստ նրա՝ Աբխազիայի, «Հարավային Օսիայի» (չակերտները հեղինակինն են – Վ.Ս.) և Մերձդնեստրի հակամարտությունները կարելի է դիտարկել մեկ հարթության մեջ, քանի որ վերջիններս, ըստ Կլիմիաշվիլու, անջատողական տարածքներ են, իսկ Ղարաբաղի պարագայում մեկ պետությունը, տվյալ դեպքում՝ Հայաստանը,

[1] **«ტბილისელები»** («Թբիլիսելերի» («Թիֆլիսցիներ»)), N 24, 2006.

տարածք է խլում մեկ այլ պետությունից (Ադրբեջանից)[1]: Ըստ քաղաքագետի՝ եթե պատերազմ վերսկսվի, Ադրբեջանը ոչ թե անջատողականության դեմ է պայքարելու, այլ՝ կոնկրետ պետության, որը յուրացրել է իր տարածքի 1/3 մասը: Քաղաքագետն այստեղ կամ կանխակալ ձևով, կամ տուրք տալով ադրբեջանական դիրքորոշումներին, չի հիշատակում ԼՂԻՄ-ը՝ որպես խորհրդային վարչամիավոր, դրանով նաև խուսափելով հակասության մեջ ընկնելու վտանգից: Գոնե այդ պարագայում՝ քաղաքագետը, հիշատակած չճանաչված պետությունների օրինակով, ԼՂՀ-ն ևս կդասեր «անջատողականների» շարքը և ՀՀ-ին չէր անվանի ագրեսոր: Ռ. Կլիմիաշվիլին հակված է նաև այն մտքին, որ հայ-ադրբեջանական հնարավոր պատերազմի դեպքում Վրաստանը պետք է անցնի Ադրբեջանի կողմը, թեև, ըստ քաղաքագետի, այդ պարագայում հնարավոր է իրավիճակը լարվի Ջավախքում: Ադրբեջան հաճախակի այցելող քաղաքագետը քննադատում է նաև Վրաստանի ղեկավարներին, նրանց անվանում «փոքրիկ տղաներ» («პატარა ბიჭები»)՝ այն բանի համար, որ վերջիններս վատ են վարվում վրաստանաբնակ ադրբեջանցիների հետ: Սահմանելով Ադրբեջանի հետ խիստ մաքսային ռեժիմ՝ Վրաստանի ղեկավարությունը, ըստ Ռ. Կլիմիաշվիլու, մեծապես դժվարացրել է Բորչալուի ադրբեջանցիների[2] կապը Ադրբեջանում ապրող իրենց բարեկամների հետ: Ավելին, քաղաքագետի մոտ դժգոհություն է առաջացնում նաև հայերի՝ մեծ քանակով Բաթումի լողափեր այցելելու փաստը: Ռ. Կլիմիաշվիլին փաստում է, որ հայերը մեծ ուրախությամբ են գնում Բաթում, քանի որ, բացի լավ պայմաններից, պատմականորեն այն իրենցն են համարում, և դրանով պայմանավորված հայերի մեծ հոսքը դեպի Բաթումի լողափեր առաջացնում է Ադրբեջանի մեծ դժգոհությունը[3]:

2006թ. «Ջորջիան թայմս» թերթի էջերում քաղաքագետները, փորձագետներն ու կոնֆլիկտաբանները լայնորեն քննարկել են արևմուտքի կողմից Կոսովոյի հնարավոր ճանաչման հետևանքները՝ մի կողմից, մյուս կողմից, որպես դրան համարժեք քայլ, ՌԴ-ի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի ճանաչման հետևանքները տարածաշրջանների և աշխարհի վրա: Բնականաբար, բանախոսներն այս կամ այն կերպ, ուղղակի

---

[1] **«ტბილისელები»** («Թբիլիսելերի» («Թիֆլիսցիներ»)), N 27, 2006.

[2] Վրաստանի ադրբեջանաբնակ (թաթարաբնակ) շրջանները հիմնականում ներառված են մեկ նահանգի մեջ, և այն պաշտոնապես կոչվում է Քվեմո Քարթլի (վրաց.՝ Ներքին Քարթլի), նախկինում այս տարածքներին տրված «Բորչալու» եզրույթը, որը համանուն թաթարական ցեղախմբի անվանումն է, ներկայումս հիմնականում օգտագործում են Բաքվում՝ այդ տարածքների իբր պատմականորեն ադրեջանապատկան լինելը մատնանշելու համար: Վրացի քաղաքագետի կողմից այս եզրույթի գործածումը ևս մեկ անգամ ապացուցում է նրա մոտ վառ արտահայտված ադրբեջանամետ հայացքների գոյությունը:

[3] **«ტბილისელები»** («Թբիլիսելերի» («Թիֆլիսցիներ»)), N 27, 2006.

կամ հպանցիկ կերպով շոշափել են նաև արցախյան հիմնահարցը: Փորձագետ Պաատա Դավիթայան, օրինակ, հավատացած էր, որ, եթե ՌԴ-ն ճանաչի Աբխազիան և Հարավային Օսիան, ապա այդ նույնը կանեն հայերը, հենց թեկուզ Ղարաբաղի պատճառով[1]: Նա նաև այն կարծիքին է, որ, եթե Վրաստանի ղեկավարությունը Աբխազիայի և Հարավային օսիայի (փորձագետի եզրույթով՝ Ցխիվալիի տարածաշրջանի) հարցով ժամանակին դիմեր Հաագայի միջազգային դատարան, ապա չէր առաջանա վերջիններիս ճանաչման հարցը: Ըստ նրա՝ Կոսովոյի ճանաչման հարցը մեջտեղ բերեց նաև Ղարաբաղի՝ տարիներով լռեցված հարցը: Պ. Դավիթայան հայտնում է, որ Հաագայի դատարան դիմելու և դրանով Ղարաբաղի ճանաչման հարցը կանխելու մտադրություններ առաջացել են նաև ադրբեջանական կողմի մոտ, և այդ երկրի ներկայացուցիչները տվյալ փուլում կապվել են իր հետ և մանրամասն խորհրդակցել են տվյալ հարցի մասին:

Լեռնային Ղարաբաղում խաղարարների, այդ թվում՝ վրաց խաղարարների տեղակայման հարցն է շոշափվում «Ռեզոնանսի» թերթում հրապարակված ծավալուն հոդվածում: Թերթը նախ ներկայացնում է մի շարք պետությունների (ՀՀ, ՌԴ, Ֆրանսիա, Թուրքիա) և միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԱՊՀ) ներկայացուցիչների՝ Լեռնային Ղարաբաղում խաղաղարար ուժերի տեղակայման վերաբերյալ արտահայտած տեսակետներն ու կարծիքները: ԵԱՀԿ նոր քարտուղար, Բելգիայի արտգործնախարար Կարլ դե Գուխտան, խոսելով հակամարտության գոտի կատարելիք իր այցի, Քոչարյան – Ալիև սպասվելիք հանդիպման մասին, նշում է նաև, որ հակամարտող կողմերի համաձայնության դեպքում ԵԱՀԿ-ն պատրաստ է Լեռնային Ղարաբաղ ուղարկել դիտորդներ կամ խաղաղարար առաքելություն իրականացնող խմբեր[2]: Թերթը խաղաղարար առաքելություն իրացնել ցանկացող երկրների շարքում դիտարկում է Թուրքիան և մեջբերում Ադրբեջանում Թուրքիայի արտակարգ և լիազոր դեսպան Թուրան Մորալի խոսքերը, ըստ որի՝ անհրաժեշտության դեպքում հնարավոր է, որ Թուրքիան խաղաղարար գումարտակներ ուղարկի Լեռնային Ղարաբաղ[3]:

Պարզելու համար, թե կոնկրետ որ երկրները կիրականացնեն խաղաղարար առաքելություն Լեռնային Ղարաբաղում և, որքանով է հնարավոր վրաց խաղաղարար ուժերի մասնակցությունը այս գործընթացներին, թերթը զրուցել է վրացի քաղաքագետներ Իգոր Կվեսելավայի և Սոսո Ցինցաձեի հետ: Ըստ առաջինի՝ և' ղարաբաղյան հիմնահարցը, և Վրաստանի խաղաղարար առաքելության իրականացման խնդիրը մեծապես կախված են Ռուսաստանից: Ըստ Ի. Կվեսելավայի՝

---

[1] «ჯორჯიან თაიმსი», («Ջորջիան թայմս»), N 6, 2006.

[2] «რეზონანსი», («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 7, 2006.

[3] Տես նույն տեղում:

Հայաստանը քաղաքական բանակցություններում կամ խաղաղարարների տեղակայման հարցում առանց Ռուսաստանի ոչ մի քայլ չի կատարի: Մյուս կողմից, քաղաքագետն այն կարծիքին է, որ Ռուսաստանը դեմ չի լինի խաղաղարարների տեղակայմանը Լեռնային Ղարաբաղում, եթե այն ֆինանսավորվի ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի կողմից: Բացի այդ, նշյալ միջազգային կազմակերպությունները խաղաղարարների տեղակայման հարցով հնարավորություն կունենան բանակցություններ սկսել այլ երկրների, այդ թվում՝ Վրաստանի հետ, միայն թե, այդ դեպքում Վրաստանը, ըստ քաղաքագետի, պետք է դուրս գա ԱՊՀ-ի կազմից: Քաղաքագետը նաև կարծում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության առկայության շնորհիվ Ռուսաստանը պահպանում է իր ազդեցությունը տարածաշրջանում և ճանկեր ի ցույց դնում, երբ հարցը հասնում է լուծման շեմին: Ամփոփելով իր միտքը՝ Ի. Կվեսելավան հույս է հայտնում, որ Լեռնային Ղարաբաղում կիրառված մոդելը (խաղաղարարների տեղակայման) հնարավոր է կիրառվի նաև Աբխազիայում, բայց այդ դեպքում էլ, ըստ հեղինակի, կրկին առաջանում է Վրաստանի՝ ԱՊՀ-ից դուրս գալու հարցը. «Կարծում եմ, որ 2006թ. կլինի ԱՊՀ-ի փլուզման տարի», - եզրափակում է Ի. Կվեսելավան[1]:

Քաղաքագետ Սոսո Ցինցաձեն, նույն թերթին տված հարցազրույցում իրաքյան դեպքերից հետո իրատեսական չի համարում, որ Եվրոպայի երկրներն իրենց խաղաղարարներին կգործուղեն Լեռնային Ղարաբաղ: Քաղաքագետն ավելի հնարավոր տարբերակ է համարում Ռուսաստանի պատկան ուժերի տեղակայումը, մանավանդ, որ Ռուսաստանը դրա համար ՄԱԿ-ից գումարներ չի պահանջում: Ս. Ցինցաձեն կասկածանքով է խոսում նաև Լեռնային Ղարաբաղում տեղակայվելիք խաղաղարար առաքելությունում Վրաստանի մասնակցության մասին՝ փաստելով, որ Վրաստանը Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցն է, իսկ Հայաստանի հետ ունի պրագմատիկ համագործակցություն[2]:

«Ռեզոնանսի» թերթի մեկ այլ համարում Լեռնային Ղարաբաղի հարցն է դարձյալ քննարկել քաղաքագետ Ռամազ Կլիմիաշվիլին: Խոսելով ՀՀ-Ռուսաստան, Ռուսաստան-Ադրբեջան հարաբերությունների վերջին զարգացումների մասին՝ քաղաքագետն այն կարծիքին է, որ Ռուսաստանը, նախապատվությունը տալով մեծ հեռանկարներ ունեցող Ադրբեջանի հետ հարաբերությունների խորացմանը, ճիշտ ընտրություն է կատարել: Քննարկման արժանացնելով Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչման հարցը՝ Ռ. Կլիմիաշվիլին կասկած է հայտնում, որ և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի հետ լավ հարաբերություն ունեցող Ռուսաստանը կճանաչի Լեռնային Ղարաբաղը: Զարգացնելով իր միտքը և վերլուծելով Ռուսաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի ճանաչման հեռահար ազդեցությունները՝

[1] Տես նույն տեղում:

[2] Տես նույն տեղում:

վրացի քաղաքագետը փաստում է, որ Ռուսաստանը չի ճանաչի ո՛չ Կոսովոն, ո՛չ Լեռնային Ղարաբաղը, ո՛չ Աբխազիան, քանի որ, ըստ նրա, դրանով Ռուսաստանը ծանր խնդրի առաջ կկանգնի Հյուսիսային Կովկասում՝ Չեչնիայում, Դաղստանում, մերձվոլգյան շրջաններում և այլն: Ռուսաստանի առջև կանգնած մարտահրավեր է նաև երկրի մահմեդականների մեծաքանակ լինելը, և այս պայմաններում Ռուսաստանը, ըստ Ռ. Կլիմիաշվիլու, հազիվ թե ճանաչի Լեռնային Ղարաբաղը[1]: Դարձյալ ՀՀ-Ռուսաստան և Ադրբեջան-Ռուսաստան հարաբերություններն է քննարկվում «Կվիրիս պալիտրա» թերթի էջերում: Հրապարակման մեջ վերլուծության են ենթարկվել հայ-ռուսական ռազմական համագործակցության շրջանակներում ՀՀ-ում գտնվող ռուսական ցամաքային և օդային զինտեխնիկայի քանակակազմը, զորքերի տեղաբաշխման պատկերը, Ռուսաստանի կողմից ՀՀ-ին սպառազինելու, հայ սապայակազմի՝ ՌԴ-ում վերապատրաստումներ անցնելու խնդիրները, ինչպես նաև ռազմական բնույթի այլ հարցեր: Թերթում քննադատություն է հնչեցվում նաև վրացական բանակի ղեկավարության հասցեին, ով, ըստ թերթի կարծիքի, «լիակատար և արդյունավետ կերպով չի յուրացրել ԱՄՆ-ի աջակցությունը, մինչդեռ Հայաստանի պաշտպանության նախարարությունը ձգտում է առավելագույն չափով «քամել» Մոսկվային»[2]: Խոսելով Վրաստանից (Բաթում և Ախալքալաք) ռուսական զորքի և զինտեխնիկայի դուրս բերման, այդ զինտեխնիկայով Գյումրիի 102-րդ ռազմակայանի համալրման մասին՝ թերթը կարծիք է հայտնում, որ Գյումրիի ռազմակայանից հանարավոր է նշանակալի զենք փոխանցվի Հայաստանի բանակին: Թերթն իր այս տեսակետը հիմնավորում է այն իրողությամբ, որ Վրաստանի տարածքում (մասնավորապես՝ Ախալքալաքում) տեղաբաշխված ռուսական ծանր տեխնիկան և անձնակազմի մի մասը գտնվել են հայերի կողքին և մարտնչել ղարաբաղյան պատերազմում[3]: Արցախյան հակամարտության խնդիրը գրեթե նույնանման համատեքստում «Կվիրիս պալիտրա»-ն արծարծել էր նաև այս հրապարակումից մոտ մեկ ամիս առաջ: Խոսելով Ախալքալաքից ռուսական ռազմակայանի դուրսբերման և վերջինիս ռազմական ներուժի Գյումրի տեղափոխման խնդրի մասին՝ թերթը մատնանշում է այն հանգամանքը, որ այդ փաստը լրջորեն վրդովվեցրել է Բաքվին: Թերթը հիշեցնում է, որ ժամանակին Ախալքալաքի ռուսական զենքը և ռազմակայանի ներկայացուցիչները ղարաբաղյան պատերազմում ամեն կերպ աջակցել են պաշտոնական Երևանին[4]: Թերթը ներկայացնում է նաև «Ժողովրդավարության կովկասյան ինստիտուտ» զարգացման

---

[1] **«რეზონანსი»** («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 57, 2006.

[2] **«კვირის პალიტრა»** («Կվիռիս պալիտռա» («Շաբաթվա ներկապնակ»)), N 5, 2006.

[3] Տես նույն տեղում:

[4] Տես նույն տեղում, N 52, 2006:

հիմնադրամի՝ ՀՀ-ում իրականացրած սոցհարցման արդյունքները, ըստ որի՝ «Ի՞նչ հետևանք կունենա Ախալքալաքից ռուսական ռազմակայանների դուրսբերումը» հարցադրմանը ՀՀ-ում հարցվածների 60 %-ը պատասխանել է, որ դա խիստ բացասաբար կանդրադառնա ՀՀ անվտանգությանը, 21 %-ը համոզված է եղել, որ ոչ մի կերպ չի ազդի, և միայն 4 %-ն է այդ փաստը գնահատել դրական: Թերթը նաև փաստում է, որ Ախալքալաքի ռազմակայանի դուրսբերմամբ և ՀՀ տարածք տեղափոխմամբ լրջորեն կամրապնդվի ՀՀ անվտանգությունը[1]:

Կրկին անդրադառնալով Ջավախքում հայերենը երկրորդ պետական լեզու հայտարարելու մասին ջավախահայության պահանջին և, հետևելով վրացական միջավայրում արմատավորված տխրահռչակ ավանդույթներին, այդ օրինական պահանջը նույնացնելով «անջատողականության» կամ «Ջավախքի՝ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի օրինակով Ջավախքի անկախացման» հետ, հոդվածագիր Թեա Մառխվաիձեն անցում է կատարում Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հարաբերությունների վերջին զարգացումների քննարկմանը: Հոդվածագիրը մատնանշում է Աբխազիայում ապրող հայերի շրջանում առաջացած խնդիրները (ըստ Թ. Մառխվաիձեի՝ դրանք առաջացել են աբխազական ղեկավարության վարած ոչ հայանպաստ քաղաքականության արդյունքում) և փաստում, որ այդ իրողությունը բացասաբար կանդրադառնա Սերգեյ Բաղափշ – Արկադի Ղուկասյան հարաբերությունների վրա և, որպես օրինակ, բերում «Նոր ԱՊՀ»-ի ստեղծման գաղափարից Ա. Ղուկասյանի հրաժարման փաստը[2]:

Աբխազիայից Վրաստան տեղափոխված հասարակական գործիչ Թ. Չելիձեի շուրթերով լայնորեն անդրադառնալով աբխազահայությանն ու վրաց-աբխազական պատերազմի տարիներին կազմավորված «Մ. Բաղրամյան» գումարտակին՝ «Ասավալ-դասավալի» թերթում հպանցիկ կերպով խոսվում է նաև Լեռնային Ղարաբաղի մասին: Հուզական և ենթակայական հողի վրա խիստ բացասական գույներով ներկայացնելով աբխազահայության դերակատարությունը 1993 թ. սեպտեմբերին Սուխումում տեղի ունեցած հայտնի իրադարձությունների ժամանակ՝ Թ. Չելիձեն նշում է. «...հայերը ցանկանում են, որ Աբխազիան դառնա երկրորդ Ղարաբաղը: Դրանում հետաքրքրված է նաև երրորդ ուժը՝ Ռուսաստանը»[3]: Վրացի գործիչը, տուրք տալով վրացական միջավայրում տիրապետող դարձած տրամադրություններին, արցախյան և աբխազական հիմնահարցերի նույնացման հողի վրա հայության դերակատարությունը

---

[1] Տես նույն տեղում:

[2] **«ახალი თაობა»** («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 63, 2006.

[3] **«ასავალ-დასავალი»** («Ասավալ-դասավալի» (թարգմ.՝ «Ոչ-ոք չգիտի որտեղ է նա, ինչ է պատահել նրան»)), N 2, 2006.

երկու պատերազմներում որակում է ծայրահեղ բացասական: Գրեթե նույնաբովանդակ ծավալուն վերլուծություն է հրապարակել «Աիսի» թերթը: Հոդվածագիր Գոգա Գոգիելին իր հրապարակման մեջ հպանցիկ կերպով անդրադառնում է վրացական միջավայրում հայերի հանդեպ բացասական տրամադրություններ առաջացնող գրեթե բոլոր կեղծ, այն է՝ հայերին Վրաստանում (Ջավախքում) մշտապես ապաստան տալուն և դրա դիմաց անշնորհակալ վերաբերմունքի արժանանալուն, ջավախահայության շրջանում առկա անջատողական տրամադրություններին, խորհրդային շրջանում հայկական սահմանը դեպի Վրաստանի խորքը տեղափոխելուն, Վաստանում (տվյալ պարագայում՝ Դմանիսի շրջանի 5 գյուղերում) ապրող հայերի՝ ծագումով վրացի լինելուն և սխալմամբ հայացվելուն, և իրական փաստերին, այն է՝ հայերենին Ջավախքում պետական լեզվի կարգավիճակ շնորհելու պահանջներին, ջավախքյան հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից Ջավախքին ինքնավարություն տրամադրելու պահանջներին, վրացական իշխանական շրջանակների՝ ծագումով հայ լինելուն, Ջավախքում տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած հայ-վրացական բախումներին և Գևորգ Գևորգյանի սպանությանը (Ծալկայի շրջանում) և այլն[1]: Հոդվածագիրն այս համընդհանուր բացասական համապատկերի վրա հոդվածագիրն օգտագործում է «ղարաբաղյան անջատողականներ» եզրույթը և հայտնում, որ նշյալ «անջատողականները» անարգել մտնում էին Վրաստանի Մառնեուլի շրջան և ոչնչացնում տեղի ադրբեջանցիներին: Գ. Գոգիելին մեջ է բերում Ադրբեջանի ներքին գործերի նախարարի նամակը՝ ուղղված Վրաստանի իր գործընկեր Շոթա Կվիրայային, թվագրված 1995 թ. օգոստոսի 2-ով, որով հայտնվում էր, որ «...ոմն Պետրոսյան, ղարաբաղցի հայ բանդիտական խմբավորման անդամների հետ միասին, մայիսի 24-ին ականապատում է Մառնեուլի շրջանի Գարաչոն գյուղի Տեքտուտ թաղամասը, որի հետևանքով զոհվել են մի քանի վրաստանաբնակ ադրբեջանցիներ[2]: Ընդգծված ադրբեջանամետ դիրքերից է հանդես գալիս նաև վրացական շրջանակներում հայտնի քաղաքագետ Սոսո Ցիսկարիշվիլին: «Կվիրիս պալիտրա» թերթին տված իր հարցազրույցում քաղաքագետն անդրադառնում է Վրաստանի ներքաղաքական և տարածաշրջանային գործընթացներին, վրաց-ռուսական վատթարացող հարաբերություններին, հարավօսեթական հակամարտությանը և այլն: Խոսելով Կարս-Ախալքալաք-Բաքու երկաթգծի հեռանկարների մասին՝ Ս. Ցիսկարիշվիլին տվյալ նախագիծը համարում է կարևոր իրադարձություն տարածաշրջանային զարգացման տեսանկյունից: Այդուհանդերձ, ըստ Ցիսկարիշվիլու, տարածաշրջանի զարգացմանը նպաստող այս նախագծի լիարժեք

[1] **«აისი»** («Աիսի» - «Արշալույս»), N 11, 2006.

[2] Տես նույն տեղում:

իրացմանը խոչընդոտում են Հայաստանի լարված հարաբերությունները Ադրբեջանի հետ, նաև այն իրողությունը, որ Հայաստանը, տարվելով իր ռազմական հաջողություններով և մշտապես գտնվելով Ռուսաստանի ազդեցության տակ, որևէ կերպ համագործակցության եզրեր չի գտնում Ադրբեջանի հետ: Տարածաշրջանում լարվածության առկայության ողջ մեղքը բարդելով Ռուսաստանի ազդեցության գոտում գտնվող Հայաստանի վրա՝ քաղաքագետը նշում է, որ Հայաստանը մի օր այդպիսով կհայտնվի երկընտրանքի առջև. կամ կվերածվի Ռուսաստանի մի մեծ ռազմակայանի, կամ կդառնա կովկասյան և եվրոպական հարաբերությունների լիիրավ մասնակիցը[1]: Կարս-Ախալքալաք-Բաքու երկաթուղու դերն ինչպես տարածաշրջանի զարգացման, այնպես էլ Ջավախքում անջատողականությունը կանխելու տեսանկյունից խիստ կարևորում է նաև քաղաքագետ Մամուկա Արեշիձեն՝ կրկին հպանցիկ կերպով Հայաստանին մեղադրելով ապակառուցողական քայլերի համար: Ըստ քաղաքագետի՝ Ադրբեջանն ամեն կերպ ձգտում է Հայաստանին խաղից դուրս նետել, թեպետև, հնարավոր է, որ Թուրքիան ցանկանար վերագործարկել Կարս-Գյումրի երկաթուղին, իսկ Ադրբեջանն էլ իր հերթին համաձայներ դրան, եթե, ըստ քաղաքագետի, հայերը չլծվեին Հայոց ցեղասպանության ճանաչման համար պայքարին, ինչի հետևանքով կտրուկ վատացան հայ-թուրքական հարաբերությունները[2]:

Վրացական հասարակական-քաղաքական միջավայրում և մամուլում արցախյան խնդրի մասին քննարկումների հերթական թեժացումը կապված էր ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի՝ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի իրավական գրանցման և Վրաստանում հայկական հուշարձանների պահպանության վերաբերյալ արած հայտարարության հետ: 2009 թ. սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտասահմանում դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական ծառայությունների ղեկավարների հետ ամենամյա հանդիպման ժամանակ ՀՀ Նախագահը, անդրադառնալով Ջավախքի հիմնախնդրին, նշեց. «Ջավախքի նկատմամբ մեր վարած քաղաքականության տրամաբանությունը, բովանդակային առումով, պետք է բխի «Ինտեգրում առանց ձուլման» սկզբունքից: Ինտեգրումը, այս դեպքում, պետք է ենթադրի վիրահայերի՝ Վրաստանի արժանապատիվ, կարող, հարգված քաղաքացիների համբավի ամրագրումը: Կարծում եմ, որ հայերենը Վրաստանում մարզային լեզու ճանաչելու, Հայ Առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Վրաստանի՝ հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Վրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը,

[1] «კვირის პალიტრა» («Կվիռիս պալիտռա» («Շաբաթվա ներկապնակ»)), N 3, 2007.

[2] «ყველა სიახლე» («Ղվելա սիախլե» («Ամեն նորություն»)), N 3, 2007.

փոխվստահության մթնոլորտի խորացմանը: Այս բոլոր հարցերում մենք պետք է լինենք նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային»[1]:

Հայտարարությունից անմիջապես անց ծավալուն հոդվածով և վերջինիս կից հարցազրույցի հրապարակմամբ հանդես եկավ «Կվիրիս պալիտրա» թերթը: Քննադատելով Ս. Սարգսյանի նշյալ հայտարարությունը՝ հոդվածագիր Խաթունա Պայճաձեն, այնուամենայնիվ, մեծ դժկամությամբ խոստովանում է, որ Վրաստանը Եվրոպայի առջև պարտավորություն է ստանձնել վավերացնելու «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիան» (Ստրասբուրգ, 05. XI. 1992)[2]: Խոսելով նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ Օսլոյի հանձնարարականների[3] և այլ միջազգային փաստաթղթերի դրույթների մասին և դրանք համարելով ծայրահեղ անընդունելի՝ հոդվածագիրը փաստում է, որ դրանք անհամատեղելի են առանց այն էլ մասնատված Վրաստանի համար[4]:

Զարգացնելով Խ.Պայճաձեի միտքը՝ նույն թերթին հարցազրույց տված քաղաքագետ Մամուկա Արեշիձեն նույնպես ծայրահեղ անընդունելի է համարում Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիայի ստորագրումը և քննադատում Վրաստանի իշխանություններին այդ քայլի համար: Ըստ Մ. Արեշիձեի՝ վրացական իշխանությունները նման անմտածված քայլի են գնացել նաև նախորդ շրջանում, երբ ստորագրել են

---

[1] «Հայաստանի Հանրապետություն», 2. IX. 2009:

[2] Վրաստանն այդ պարտավորությունն ստանձնել է եվրոկառույցներին անդամակցելիս (1999 թվականից): Նշյալ խարտիան չվավերացնելու արդյունքում՝ ներկայումս Վրաստանում վրացերենի (պետական լեզվի) կողքին այդ երկրի սահմանադրությամբ ամրագրված (8-րդ հոդված) իրավական կարգավիճակ ունի միայն աբխազերենը: Վրացերենի պահպանման և զարգացման իրավաբանական երաշխիքներ ստեղծելու նպատակով Վրաստանի խորհրդարանը 2015 թ. հուլիսի 22-ին ընդունեց օրենք «Պետական լեզվի մասին», որտեղ սահմանվեց նաև «ազգային փոքրամասնությունների լեզու» հասկացությունը, հստակեցվեցին երկրի ոչ վրացի ազգաբնակչության կողմից մայրենիի կիրառման ինչ-ինչ սկզբունքներ: Այդուհանդերձ, Վրաստանի սահմանադրության 8-րդ հոդվածը սահմանում է. «Վրաստանի պետական լեզուն հանդիսանում է վրացերենը, Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունում՝ նաև աբխազերենը», տե՛ս **საქართველოს კონსტიტუცია, მიღებულია 1995 წლის 24 აგვისტოს, მუხლი 8, საქართველოს 2002 წლის 10 ოქტომბრის კონსტიტუციური კანონი 1689–სსმI, № 28, 28. 10. 2002 წ., მუხლი 128.**

[3] Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների վերաբերյալ Օսլոյի հանձնարարականներ, փետրվար, 1998թ.: Փաստաթուղթն ամբողջությամբ տե՛ս **Ջավախահայության իրավունքների ամրագրումը միջազգային փաստաթղթերում,** հեղինակ-կազմող՝ Վահե Սարգսյան, Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի, Երևան, 2009, էջ 337-341:

[4] **«ვირის პალიტრა»** («Կվիռիս պալիտռա» («Շաբաթվա ներկապնակ»)), N 32, 2009.

թուրք-մեսխեթցիների վերաբնակեցման մասին պարտավորության տակ։ Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խարտիայի ստորագրումն, ըստ քաղաքագետի, կբերի նրան, որ Վրաստանի ամեն մի գյուղ կունենա իր լեզուն, ինչպես, օրինակ, դա առկա է Դաղստանում։ Նա այս հողի վրա խստորեն քննադատում է Սերժ Սարգսյանի վերոնշյալ քայլը, այն կապում ինչպես ՀՀ-Թուրքիա սահմանի հնարավոր բացման և ՀՀ-ի՝ Վրաստանից կախվածության նվազեցման, այնպես էլ Ռուսաստանի կողմից հնարավոր ճնշումների հետ։ Մ. Արեշիձեն ՀՀ Նախագահի նշյալ հայտարարությունն ուղղակիորեն կապում է հայության՝ Ադրբեջանին, Թուրքիային և Վրաստանին ներկայացվող տարածքային պահանջների հետ և փաստում, որ Ղարաբաղից հետո ծրագրվում է Հայաստանին միացնել նաև Ջավախքը[1]։

Գրեթե նույնաբովանդակ մեկ այլ հրապարակմամբ է հանդես եկել ազգային անվտանգության հարցերի փորձագետ, անվտանգության գնդապետ Բեսիկ Ալադաշվիլին՝ «Ղվելա սիախլե» թերթի էջերում։ Գնդապետը իր ծավալուն հրապարակումն սկսում է «ավանդական» հարցերի արծարծումից և փաստում, որ Հայաստանի՝ Ջավախքի նկատմամբ հավակնություններին տվյալ շրջանում ավելացել է ևս մեկը՝ Մառնելուլի շրջանի հարավային հայաբնակ գյուղերի (վրացի հեղինակը այստեղ չակերտավոր կերպով մեջ է բերում նաև հայ փորձագետների (հեղինակի հորջորջմամբ՝ «վայփորձագետների» (“ვაიექსპერტი”)) կողմից օգտագործվող «Հյուսիսային Լոռի» եզրույթը (“ჩრდილოეთ ლორე”)) հանդեպ պահանջները[2]։ Հեղինակը լայն անդրադարձ է կատարում Ռուսաստանի նվաճողական քաղաքականությանը, Ցարական Ռուսաստանի այսրկովկասյան նահանգներում հայության վերաբնակեցման գործընթացներին և նշում, որ 18-րդ դարի վերջերից սկիզբ առած այդ գործընթացը հայերի համար հավասարազոր էր ֆիզիկական փրկության և բերրի հողերում բնակություն հաստատելուն, իսկ Վրաստանի և Ադրբեջանի[3] համար՝ հավատքի, մշակույթի և լեզվի բռնի ռուսականացման։ Հասնելով արդի ժամանակաշրջանին՝ Բ. Ալադաշվիլին քննախույզ հայացք է նետում ՀՀ-ՌԴ և ՀՀ-Վրաստան ներկա հարաբերությունների վրա՝ եզրակացնելով, որ հայկական կողմը գործի դնելով հատուկ ծառայությունների իր ողջ ներուժը և լայնորեն համագործակցելով ռուսական ուժային մարմինների հետ՝

[1] Տես նույն տեղում։

[2] **«ყველა სიახლე»** («Ղվելա սիախլե» («Ամեն նորություն»)), N 34, 2009.

[3] Հեղինակի հրապարակման ենթակայականությունից (սուբյեկտիվիզմ) ելնելով՝ ամենևին զարմանալի չէ 18-րդ դարի իրադարձությունների մասին խոսելիս «Ադրբեջան» տերմինի գործածումը։ Պարզորոշ է, որ, Վրաստանին և Ադրբեջանին 18-րդ դարում կողք-կողքի հիշատակելով, հեղինակը տուրք է տվել արդի քաղաքական զարգացումներին, որոնց մեջ Վրաստանը և Ադրբեջանը լայն հանրության առջև ներկայանում են որպես «ճակատագրակից» և «հարևանների կողմից բզկտված» երկրներ։

մշտապես գործել և գործում է ընդդեմ Վրաստանի շահերի։ Որպես փաստարկ՝ գնդապետը մատնանշում է Գյումրիի ռուսական ռազմաբազայի, հակաօդային և այլ ուժերի գոյությունը և Ռուսաստանի՝ ՀՀ-ում տեղակայված մի շարք հետախուզական բաժանմունքներ, որոնք հայկական կողմի օժանդակությամբ և համագործակցությամբ իրականացնում են հետախուզական-դիվերսիոն բնույթի գործողություններ։ Չնայած ՀՀ և Ադրբեջանի նախագահների՝ տվյալ շրջանում ակտիվացած հանդիպումներին, Թուրքիայի նախագահի՝ Երևան կատարած ոչ պաշտոնական այցին և այլն, այդուհանդերձ, ըստ հոդվածագրի, որևէ էական տեղաշարժեր տեղի չունեցան ՀՀ-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման վրա։ Գալով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին՝ Բ. Ալադաշվիլին փաստում է, որ «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը» (չակերտները հեղինակինն են – “ᲛᲗᲘᲐᲜᲘ ᲙᲐᲠᲐᲑᲐᲦᲘᲡ ᲙᲝᲜᲤᲚᲘᲥᲢᲘ”՝ Վ.Ս.)[1] վաղուց դուրս է եկել տարածաշրջանային նեղ շրջանակներից և վերածվել միջազգային մակարդակի տնտեսական և քաղաքական հակամարտության։ Ըստ փորձագետի՝ հակամարտության երկու կողմերն էլ չեն ցանկանում զիջել դիրքերը, և այս պարագայում Ռուսաստանի «ակտիվացումը» (չակերտները հեղինակինն են – “ᲒᲐᲐᲥᲢᲘᲣᲠᲔᲑᲐ”՝ Վ.Ս.) կարող է հանդիսանալ միայն բանակցային հին ձևաչափի շարունակությունը[2]։

2008թ. օգոստոսյան վրաց-օսական պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված նոր քաղաքական իրադրությունն է քննարկում «Ասավալ-դասավալի» թերթի ընդդիմադիր հոդվածագիր Գիորգի Գիգաուրին։ Վերջինս Վրաստանի ունեցած տարածքային կորուստների, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում Վրաստանի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական վատթար իրադրության համար մեղադրելով Մ. Սահակաշվիլուն՝ անցնում է ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորման տվյալ շրջափուլի բազմակողմանի վերլուծությանը, Սերժ Սարգսյանի կողմից հայկական սփյուռքի մի շարք շրջաններ կատարած այցերին, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին և այլն[3]։ Հետաքրքրական է, որ հոդվածագիրը տվյալ շրջանի ՀՀ-Թուրքիա մերձեցման փորձերը կապում է 2008 թ. օգոստոսյան պատերազմում Վրաստանի կրած պարտության հետ. «եթե մինչ ռուս-վրացական պատերազմը ողջ աշխարհից պահանջում էր ճանաչել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, ապա 2008 թ. օգոստոսից հետո Երևանը ձգտում է բարեկամանալ Ստամբուլի հետ», - ընդգծված գլխատառերով գրում է Գ. Գիգաուրին[4]։ Վերջինս փաստում է, որ Հայաստանի ղեկավարությանը հաջողվել է երկրի ներսում հասնել

---

[1] **«ᲧᲕᲔᲚᲐ ᲡᲘᲐᲮᲚᲔ»** («Ղվելա սիախլե» («Ամեն նորություն»)), N 34, 2009.

[2] Տես նույն տեղում։

[3] **«ᲐᲡᲐᲕᲐᲚ-ᲓᲐᲡᲐᲕᲐᲚᲘ»** («Ասավալ-դասավալի»), N 40, 2009.

[4] Տես նույն տեղում։

կոնսենսուսի, ինչի արդյունքում Հայաստանի հասարակությունը պատրաստ է երկրորդ պլան մղելու Թուրքիայում իրագործված 1,5 մլն հայության ցեղասպանությունը, միայն թե Հայաստանը ձեռք բերի նոր աշխարհաքաղաքական գործառույթներ և դուրս գա մեկուսացումից: Զարգացնելով միտքը՝ «Ասավալ-դասավալի»-ի հոդվածագիրը նշում է, որ Հայկական սփյուռքը, ի տարբերություն Հայաստանի հասարակության, դեմ է հայ-թուրքական մերձեցմանը, ավելին, «. . . հայկական համայնքը վախենում է նրանից, որ Թուրքիայի հետ մերձեցման դիմաց Երևանին հարկ կլինի նշանակալից զիջումների գնալ Ղարաբաղի հարցում: Դա չի բացառվում, քանի որ առանց ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման ոչ մի գին չի ունենա հայ-թուրքական մերձեցումը, և անհրաժեշտ է, որ այդ նախագծում ներգրավվի նաև Ադրբեջանը: Իսկ Ադրբեջանը հայ-թուրքական աշխարհաքաղաքական նախագծերում կներգրավվի միայն այն այն բանից հետո, երբ Երևանը կհրաժարվի Ղարաբաղի օկուպացված տարածքներից և Ադրբեջանի հետ կվերականգնի բարիդրացիական հարաբերությունները», - եզրակացնում է հոդվածագիր Գ. Գիգաուրին[1]:

Վրացական թերթերն այս ժամանակամիջոցում լայնորեն լուսաբանել են նաև Թիֆլիսում Ադրբեջանի դեսպանատան, Հ. Ալիևի անվան հիմնադրամի և Ադրբեջանի իշխանությունների (Միլլի Մեջլիս և այլն) նախաձեռնած մի շարք միջոցառումները, որոնք նվիրված են եղել Խոջալուի հայտնի դեպքերին կամ, ադրբեջանցիների հորջորջմամբ, «Խոջալուի ցեղասպանությանը»: Վրացի լրագրողներն այս հրապարակումներում լայնորեն օգտագործել են «հայ անջատողական ռազմական կազմավորումներ» և այլ նման եզրույթներ[2]:

Ամփոփենք.

1. Վրաստանի պաշտոնական դիրքորոշումը արցախյան հիմնահարցի նկատմամբ պայմանավորված է և' աբխազական ու հարավօսական հիմնահարցերի առկայությամբ, և' Ադրբեջանի հետ բարիդրացիական հարաբերություններով, և' Ադրբեջանի հետ ունեցած տարանցիկ, էներգետիկ, ֆինանսատնտեսական և այլ տեսակի խորը կապերով, ինչպես նաև նշյալ ոլորտներում Ադրբեջանից ունեցած մեծ կախվածությամբ, և' երկրի հարավային երկու խոշոր նահանգներում հոծ կերպով կողք-կողքի ապրող հայկական և ադրբեջանական բնակչության առկայությամբ, և' Ռուսաստանին հակընդդեմ հորիզոնական առանցքի ձևավորման և ամրացման հանդեպ իր մեծ հետաքրքրություններով և այլն:

---

[1] Տես նույն տեղում:

[2] **«24 საათი»** («24 սաաթի» («24 ժամ»)), N 37, 2007, **«საქართველოს რესპუბლიკა»** («Սաքարթվելոս Ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)), N 38, 2007 և այլն:

2. Վրաց հասարակական-քաղաքական մտքի դիրքորոշումներն արցախյան հիմնահարցի նկատմամբ առանձնակի չեն տարբերվում Վրաստանի պաշտոնական դիրքորոշումներից: Այդ դիրքորոշումները շատ դեպքերում ադրբեջանամետ են, լավագույն պարագաներում՝ չեզոք:

3. Վրաց հասարակական-քաղաքական միտքը արցախյան հիմնահարցի և, ընդհանրապես, տարածաշրջանում հայկական գործոնի մասին խոսելիս գրեթե չի մատնանշում երկու երկրների՝ Հայաստանի և Վրաստանի, ինչպես նաև երկու ժողովուրդների՝ հայերի ու վրացիների, բազմահազարամյա արմատներ ունեցող ընդհանուր քաղաքակրթական արժեքները, քրիստոնեական ընտանիքի մաս կազմելու հանգամանքը:

4. Վրաց հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների շատ փոքր հատվածն է մատնանշում այն տնտեսական, ժողովրդագրական և քաղաքակրթական վտանգները, որոնք տարածաշրջանում առաջանում են Թուրքիայի և Ադրբեջանի մասնակցությամբ ձևավորվող հորիզոնական առանցքով:

5. Վրաց հասարակական-քաղաքական միտքը արցախյան հիմնահարցը շատ դեպքերում քննարկել է ջավախքյան իրադարձությունների համապատկերին, ինչից ելնելով էլ արցախյան ազգային-ազատագրական պայքարը, նույնացվելով Ջավախքի հիմնահարցի վրացական ընկալումների հետ, դիտվել է որպես «հայկական անջատողականության» կամ «մեծ Հայաստանի» ստեղծմանն ուղղված դրսևորում, Ադրբեջանի տարածքային ամբողջականության դեմ իրականացված գործողություն և այլն:

6. Արցախյան ազատագրական պայքարը վրաց հասարակական-քաղաքական միտքը կապում է նաև հայերի ունեցած դարավոր երազանքի, այն է՝ մեծ Հայաստան ունենալու և դեպի ծով ելք ունենալու գաղափարի իրագործման հետ: Այս գաղափարը վրացական շրջանակների մոտ ընկալվում է խիստ բացասաբար, և վերջիններս միանգամից հիշատակում են կորսնցված կամ 1921 թ. Կովբյուրոյի որոշմամբ Խորհրդային Հայաստանին անցած Լոռին (որն իրականում Լոռու Չեզոք գոտին էր կամ բուն Լոռի գավառի հարավային 1/3 մասը), ինչպես նաև Ջավախքը (Ախալցխայի և Ախալքալաքի գավառները) և Բաթումը, որոնք, ըստ վրացական ընկալման, հայկական կողմը պատրաստվում է ներառել մեծ Հայաստանի մեջ:

7. Վրաց հասարակական-քաղաքական միտքը, ինչպես պետական շատ շրջանակներ, խորքի մեջ այս կամ այն կերպ կախվածություն ունի տարիներով Վրաստան հոսող ադրբեջանական տնտեսական և դրամական կապիտալից, և արցախյան խնդրում վերջիններիս

արտահայտած դիրքորոշումները նման դեպքերում պայմանավորված են նաև այս հանգամանքով:

ԱՐՑԱԽԻ ԽՆԴԻՐԸ ՎՐԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ (ԸՍՏ 1999-2009 ԹԹ. ՎՐԱՑԱԼԵԶՈՒ ՏՊԱԳԻՐ ՄԱՄՈՒԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ) մաս II

Վահե Դավիթի Սարգսյան
ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտաշխատող,
պատմության գիտությունների թեկնածու

Համառոտագիր

Վրաստանի պետական դիրքորոշումը արցախյան հարցում Վրաստանի կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականության պաշտոնական ճանաչումն է: Այս դիրքորոշումը պայմանավորված է տարանցիկ, էներգետիկ, ֆինանսական, տնտեսական և այլ ոլորտներում Ադրբեջանի հետ խորը հարաբերությունների առկայությամբ:

Պաշտոնական դիրքորոշումից բացի, բնականաբար, վրացական փորձագիտական, հասարակական-քաղաքական, ակադեմիական և այլ շրջանակները ունեն իրենց դիրքորոշումները, տեսակետներն ու կարծիքները արցախյան հիմնահարցի վերաբերյալ: Հոդվածում ամփոփված են արցախյան հիմնարցի վերաբերյալ արտահայտված տեսակետները, որոնք տպագրվել են վրացական տպագիր մամուլում 1999-2009 թվականներին:

Բանալի բառեր՝ Վրաստան, ՀՀ, վրաց հասարակական-քաղաքական միտք, տպագիր մամուլ, արցախյան հիմնահարց:

АРЦАХСКАЯ ПРОБЛЕМА В ВОСПРИЯТИИ ГРУЗИНСКОЙ ОБЩЕСТВЕННО – ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ (НА ОСНОВЕ ГРУЗИНОЯЗЫЧНЫХ ПЕЧАТНЫХ МАТЕРИАЛОВ 1999-2009 гг.) часть II

Ваэ Давидович Саркисян
Научный сотрудник Института истории НАН РА,
кандидат исторических наук

Аннотация

Государственная позиция Грузии в вопросе Арцаха заключается в официальном признании Грузией территориальной целостности Азербайджана. Эта позиция обусловлена наличием глубоких отношений с Азербайджаном в транзитном, энергетическом, финансовом, экономическом и других сферах.

Помимо официальной позиции, естественно, в грузинских экспертных, общественно-политических, академических и других кругах имеют место свои позиции, взгляды и мнения об арцахской проблеме. В статье обобщены взгляды, высказанные об арцахской проблеме, которые были опубликованы в грузинских печатных СМИ в 1999-2009 гг.

Ключевые слова: Грузия, Республика Армения, грузинская общественно-политическая мысль, печатные СМИ, арцахская проблема.

THE ARTSAKH CONFLICT ACCORDING TO THE GEORGIAN SOCIAL-POLITICAL PERCEPTION (DATE IS TAKEN FROM THE GEORGIAN PRINT MEDIA 1999-2009) Part 2

Vahe David Sarkisyan
Research Associate in the Institute of History of NAS RA,
Candidate of Historical Sciences

Abstract

The state position of Georgia in the Artsakh issue is the official recognition by Georgia of the territorial integrity of Azerbaijan. This position is due to the presence of deep relations with Azerbaijan in transit, energy, financial, economic and other fields.

In addition to the official position, naturally, Georgian experts, socio-political, academic and other circles have their own positions, views and opinions on the Artsakh problem. The article summarizes the views expressed on the Artsakh issue, which were published in the Georgian print media in 1999-2009.

Keywords: Georgia, RA, Georgian social-political concept, print media, Artsakh issue.